ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գնահատում: Գնահատման տեսակները:

Կատարող՝ Երանուհի Մանուկյան

«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ

դպրոց

Ղեկավար՝ բ. գ թ, դոցենտ Աննա Յայլոյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ - 2023

Բովանդակություն

Ներածություն 3

ԳԼՈՒԽ 1.Գնահատում: Գնահատման Տեսակները:..... 6

Գլուխ 2. Գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում..... 16

Եզրակացություն 19

Գրականության ցանկ 21

Ներածություն

Գնահատումը բազմաբնույթ տերմին է, որը սահմանվում է որպես տեղեկատվության ձեռքբերման գործընթաց, որն էլ օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար:

Թեմայի արդիականությունը: Քանի որ հանրակրթական դպրոցում կարևոր դեր ունի գնահատումը, ուստի կարևոր եմ համարել անդրադառնալ գնահատմանը, ներկայացնել գնահատման տեսակները, ցույց տալ դրանց տարբերությունները և ներկայացնել սեփական ուղիներն ու միջոցները ճիշտ գնահատում կատարելու:

Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում կիրառվում են տարբեր անհատական մոտեցումներ (խրախուսում, ոգևորում) երեխաների գիտելիքները, կարողությունները և հմտությունները այլ կերպ չեն գնահատվում:

Միջնակարգ հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքերի բացահայտման միջոց:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանն ու ինքնազարգացմանը:

Գնահատման հիմնական *գործառույթներն* են

- սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին

անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը.

- սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը.
- դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը.
- սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը.
- սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը.
- մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը.
- հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին.
- չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը.
- սովորողների ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը.
- դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատումը բացահայտում է նաև ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին ուսումնական հաստատություններում, մարզում, ինչպես նաև՝ հանրապետության ողջ տարածքում:

Գնահատման հիմնական *սկզբունքները* հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն

- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

Գնահատմամբ պարզվում է սովորողների դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Գնահատման հիմնական ***նպատակն է՝***

- սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը
- արժեքային որակների ձևավորման և դրանց հիման վրա՝ ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը
- գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

Թեմայի **խնդիրն** է համարվում՝

1) ներկայացնել գնահատման տեսակները,
2) պարզել, թե դասավանդման շրջանակներում գնահատման ինչպիսի գործիքներ են կիրառվում:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Գնահատում: Գնահատման Տեսակները:

Ինչպես արդեն նշվեց ներածություն բաժնում, ուսումնառության արդյունքների գնահատումը կամ այլ կերպ ասած գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի, որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքերի մասին գրանցումները: Գնահատումը, արժևորումը և չափում եզրույթներ են, որոնք քննչվում են որոշակի տվյալների պարբերական հավաքման և որոշումներ կայացնելու նպատակով: Արժևորումն աշխատանքի արդյունքի, երևույթի, արժեքի մասին հիմնավորված եզրահանգում անելն է: Ուսուցիչներն արժևորում են, թե աշակերտներն ինչպիսի հաջողությամբ են հասնում իրենց ուսումնական նպատակներին: Գնահատում տերմինը մինչ այժմ մանկավարժության մեջ հիմնականում օգտագործվել է չափման իմաստով, չեն տարբերակվել «գնահատում» ու «գնահատական տալ»արտահայտությունների իմաստները, բայց ներկայումս այն ձեռք է բերել այլ իմաստներ: Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական և որակական տվյալների նպատակային գրառում: Ուստի դա ավելի լայն ընդգրկում ունի քան չափումը: Ուսուցիչների նպատակը, սովորաբար, աշակերտների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է աշակերտների դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում:

Ընթացիկ գնահատման համակարգ ասելով հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից աշակերտների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծական հաշվետվություն և գնահատման համակարգերի կառավարում: Ուսումնական գործընթացում աշակերտների գնահատումն ու արժևորումը հիմնականում ամփոփում են այն, թե դասավանդման ընթացքում, գնահատման և արժևորման միջոցով, ուսուցիչն ինչ խնդիրներ է տեսնում, դրանց լուծման համար ինչ ուղիներ է առաջադրում և ինչ որոշումներ կայացնում: Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է **քանակական (միավորային)** և **ձևավորող (ուսուցանող)** ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հատատված կարգով:

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատական տալ կամ չափել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչով ու ծրագրով:

Մեր երկրում կիրառության մեջ է եղել հիմնականում գնահատման այլ ձևով, որը իրագործման կարգով պայմանավորված, գնահատականի հավաստիության աստիճանը ցածր է: Այդ դեպքում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը: Գնահատման նոր համակարգում երկրորդ ձևը նախատեսում է գնահատումների կամ արժևորումների օգտագործում՝ զուտ սովորելու և սովորեցնելու նպատակով: Այն անվանում են ուսուցանող գնահատում կամ գնահատում՝ սովորելու համար: Գնահատման այս բաղադրիչի նպատակն է կրթության որակի բարելավումը՝ հատկապես ցածր և միջին ունակություններ ցուցաբերող աշակերտների համար: Միավորային գնահատումն ունի կրթության որակը վերահսկող դեր: Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնասիրելուց հետո՝ կիսամյակի ընթացքում գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակն ամրագրելու, գործնական աշխատանքների կատարման կամ ուսումնական այլ հմտությունների որակը թվանշանով արտահայտելու համար: Թվանշանային գնահատականի օգնությամբ արձանագրվում է տվյալ նյութին աշակերտի

տիրապետման աստիճանը: Միավորային գնահատականն ունի «մրցակցային բնույթ»: Ստացած միավորների միջոցով աշակերտները համեմատվում են մեկը մյուսի հետ:

Այս գնահատման արդյունքներն օգտագործվում են կրթության որակի հաշվետվության և սովորողի կրթության ձեռքբերումների ներկայացման նպատակով: Ընթացիկ գնահատման նոր համակարգում շեշտադրվում են աշակերտի հետ կատարվելիք կանոնակարգված ուսուցողական աշխատանքները, որոնց անվանում ենք ուսուցանվող գնահատումներ կամ արժևորումներ: Այդ աշխատանքներն ունեն զուտ ուսուցանող բնույթ և կիրառվում են միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածներում; Աշակերտի ձեռքբերումները համեմատվում են կրթական պահանջների և նրա նախկին ձեձռքբերումների հետ և չեն համեմատվում մյուս աշակերտների ձեռքբերումների հետ: Այս դեպքում ուսուցիչը, երբեմն նաև աշակերտը, պարզում է կատարված աշխատանքում տեղ գտած թերություններն ու սխալները և նշում դրանց վերացման ուղիները: Այդ աշխատանքի հիմնական նպատակն է արվածի արժևորման, հետադարձ կապով վերլուծման և քննարկումների միջոցով նպաստել աշակերտի կրթական առաջընթացին:

Միավորային գնահատումն ըստ նպատակահարմարության կիրառվում է՝

1. դասաժամերին և ունի ծրագրային նյութի յուրացման մակարդակը ստուգող, խթանող և կարգավորող նշանակություն:
2. դասավանդող թեմայի ավարտին սովորողի՝ տվյալ թեմայից թեռքբերումների մակարդակը պարզելու նպատակով,
3. կիսամյակի ամփոփման փուլում, որի նպառակն է միավորով արտահայտել մեկ կիսամյակի ընթացքու սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտություններիմ մակարդակը:

Հանրակրթական դպրոցի առաջին դասարանում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով՝ ըստ հաստատված ձևի, յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է կրթական զարգացման բնութագիր: Այն հանրակրթական դպրոցներում կիրառվում է սկսածերկրորդ դասարանից: Սովորողների

ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ արտահայտելու համար երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները.

1) բանավոր հարցում,
2) գործնական աշխատանք,
3) թեմատիկ գրավոր աշխատանք,
4) կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Բանավոր կամ գրավոր հարցումները և գործնական աշխատանքները գնահատելիս հաշվի են առնվում դրանց կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունն ըստ առարկայական չափորոշչի պահանջների: Գործնական աշխատանքի դեպքում հաշվի են առնվում նաև աշխատանքի կատարման, վերլուծության և ամփոփման համար պահանջվող կարողությունն ու հմտությունը: Ուսումնական որոշակի նյութից սովորողի ուսումնական ձեռքբերումները գնահատելիս ուսուցիչը կարող է կիրառել գնահատման այլ սանդղակներ, բայց պաշտոնական գրանցումների համար դրանք պետք է բերվեն 10 միավորային սանդղակի:

Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվող 10 միավորային սանդղակում ոչ մի թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները, սկսվում 1 միավորից և չունի անբավարար սանդղակ:

Միավոր	**Անվանում**
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»

2	«վատ»
1	«շատ վատ»

Ինչպես տեսնում ենք դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10 միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին:

Քանի որ ԿԱՊԿՈՒ սովորողները ներառվում են ուսումնական գործընթացում՝ նրանց գնահատումը ևս պետք է իրականացվի առանց խտրականության՝ օգտագործելով միավորային գնահատման համապատասխան տեսակները (կախված ներառման կարիքից) և գնահատման 10 միավորային սանդղակը: Հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ սովորողների առանձնահատկությունները, ուսումնական ձեռքբերումների ստուգման և գնահատման միջոցները հարմարեցվում են նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին: Առաջադրանքները կարելի է կազմել ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի համար՝ չափորոշչի յուրաքանչյուր պահանջները՝ անհրաժեշտության դեպքում դրանք տրոհելով և հարմարցնելով այդ սովորողների ընկալման հնարավորություններին: Ամփոփիչ աշխատանքները պետք է հարմարեցվեն ԿԱՊԿՈՒ սովորողի կարիքներին՝ ըստ անհրաժեշտության ապահովելով լրացուցիչ ժամանակ, հանգստանալու ընդմիջումներ:

Գնահատման գործընթացը պետք է պայմաններ ընձեռի սովորողներին իրենց գիտելիքների և ներուժի արտահայտման համար: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ գնահատումն իրականացվի սովորողի համար անմիջական, հանգիստ և բնական պայմաններում: Այն պետք է հնարավորություն ընձեռի սովորողի նկատմամբ արդար վերաբերմունքի դրսևորման համար, հիմնված պետք է լինի հավասարության սկզբունքի և օբյեկտիբ գնահատման հիմի վրա:

ԿԱՊԿՈՒ սովորողի միավորային գնահատման կիրառման քանակները, կախված տվյալ սովորողի կարիքի առանձնահատկություններից, կարելի է հասցնել թույլատրելի նվազագույն քանակներին:

Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեսավորում): Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, չափոփոշչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով, իր կողմից սահմանած պարբերականությամբ, դպրոցներում պետք է կազմակերպի արտաքին գնահատում:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը իրականացվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարնմի սահմանած կարգի: Միավորային գնահատումը իրականացվում է սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից:

7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսոմնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Այլընտրանքային ծրագիր իրականացնելու դեպքում կարող է գործել գնահատման այլ կարգ: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների հիման վրա՝ տարեկան գնահատականները ձևավորում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր ասատիճանի ավարտին իրականացվում է պետական ամփոփիչ ատեստավորում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է ուսումնական առարկաների տարեկան գնահատականների, ավարտական քննությունների կամ ստուգարքների և բնութագրման արդյունքներով: Պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները գրանցվում են ավարտական փաստաթղթում:

4-րդ դասարանում իրականացվում է ամփոփիչ գնահատում բնութագրման միջոցով՝ ըստ 10 միավորային գնահատման սանդղակի, 9-րդ դասարանում՝ ավարտական քննություններ, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններ: Քննությունների և գիտելիքների ստուգումների ցանկի հաստատումը և փոփոխություններն իրականացվում են կրթության կառավարման լիազոր մարմնի կողմից:

Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կրթության կառավարման լիազորված մարմնի որոշմամբ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ իրենց անհատական ուսուցման պլանի՝ 10 միավորային սանդղակով:

Ձևավորող գնահատման բաղադրիչներն են՝

- սովորողների գործուն մասնակցություն սեփակկան ուսումնառությանը
- սովորողների ուսումնառության գործընթացի շտկում
- սովորողների մոտիվացիայի ապահովում
- հետադարձ կապի ապահովում
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Ստորև ներկայացնում եմ միավորային և ձևավորող գնահատման համեմատման աղյուսակը:

Միավորային	Ձևավորող
Իրականացվում է ուսուցման փուլի ավարտին:	իրականացում ուսուցման ողջ ընթացքում:
Գնահատումն իրականացնում է ուսուցիչը:	Գնահատմանը մասնակցում է և՝ ուսուցիչը և՝ սովորողը:
Գնահատման արդյունքում տրվում է առաջադիմության թերթիկ:	Գնահատմսն արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը:
Ամրագրում է ուսուցման փուլի արդյունքը:	Բացահայտում է սովորողի ուժեղ և թույլ կողմերը, բարելավում է ուսուցման գործընթացը:
Գնահատվում է նույն հաստատուն՝ 1-10 սանդղակով:	Գնահատումն իրականացվում է տարբեր ՁԳ գործիքներով:

Տարբեր ուսումնական առարկաների համար սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մանկավարժական իրավիճակներ, որոնց մեջ հայտնվող սովորողները հնարավորություն կունենան դրսևորելու, զարգացնելու որոշակի կարողություններ՝ վերլուծելու, պլանավորելու, ինքնարտահայտվելու, գնահատելու, համադրելու և այլ որակներ՝ նպատակասլացություն, համբերատարություն, հանդուրժողականություն և այլն: Սովորողի ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնագնահատման կարողությունների խթանմանը և ինքնազարգացմանը էապես նպաստում են նաև ձևավորող գնահատման գործիքները, մասնավորապես՝ ինքնագնահատումը:

Ինքնագնահատում իրկանացնելիս սովորողը ոչ թե զուտ մեխանիկական աշխատանք է իրականացնում, այլ գործի է դնում իմացական գործընթացները, ինչպես նաև հիմքեր է ստեղծում ստեղծագործական մտածողության համար: Ինքնագնահատման հիմքը կազմում է վերլուծությունը,որը վերաբերում է որ միայն արդյունքներին, այլև գործընթացին, ներդրած ջանքերին, վերաբերմունքին և այլն, իսկ ինքնագնահատման համար անհրաժեշտ է սանդղակ՝ հստակ չափանիշներով:

Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ, երբ այն կախված է գնահատողի աբձնական դատողությունից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ: Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանյկյուններից չափել սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Սովորողի ուսումնառության արդյունքների միավորային գնահատման ենթակա բանավոր, գրավոր և գործնական աշխատանքների ստուգումից ստացված արդյունքների միավորների բնութագրիչները սահմանված են Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան:

Եթե փորձենք տարանջատել գիտելիքի գնահատումը կատարողականության գնահատումից, ապա կարող ենք ասել, որ կատարողականության գնահատումը սովորողից պահանջում է անմիջական թեստի կատարման ընթացքում ներկայացնել բանավոր կամ գրավոր խոսքի նմուշներ: Գիտելիքի գնահատումը սովորողից պահանջում է պատասխանել բազմատեսակ հարցերի՝ ներկայացնելով իր լեզվական գիտելիքների, լեզվական միջոցների տիրապետման ապացույցներ:

Պետք է հաշվի առնել, թե գնահատումն ինչպիսի դիտորդների համար է կատարվում, նրանք ինչպես են կարևորում գնահատման արդյունքները:

Կառավարությունը և կրթության նախարարությունը ապացույցներ են պահանջում այն մասին, թե բարելավվում է, արդյոք, բնագավառում տիրող իրավիճակ:

Դպրոցի տնօրենը, բուհի ռեկտորը ցանկանում են ունենալ հավաստի և օբյեկտիվ տեղեկություն իրենց ղեկավարած հիմնարկում ուսումնառության մակարդակի վերաբերյալ:

Ծնողները նույնպես երեխաների նվաճումները հաստատող ապացույցի կարիք ունեն: Մանկավարժները պետք է պատկերացում ունենան, թե իրենց սաներն ինչպես են առաջադիմում: Սովորողներն էլ կարիք ունեն տեղեկություն ստանալու, թե իրենց

ձեռքբերումներն ինչպիսի համեմատության մեջ են իրենց դասընկերների արդյունքների հետ, թե ինչ ապագա կարող են իրենք ակնկալել:

Ավանդաբար այս դիտորդները բավարարվել են ստուգման այնպիսի ձևերով, որոնց արդյունքը եղել է քանակապես չափելի: Սովորողները գնահատվել են իրենց իմացածի հիման վրա: Սակայն ուսուցիչները իրենց դասարաններում որքան շատ են ակտիվ ուսումնառություն և քննադատական մտածողություն ներմուծում, այնքան շատ են համոզվում, որ գնահատումը պահանջում է նոր մոտեցումներ:

Ուսուցիչներին անհրաժեշտ է գտնել աշակերտների սովորելու և մտածելու ընթացքը, և ոչ թե ստուգված արդյունքը գնահատելու միջոցները: Աշակերտները պարտավոր են հասկանալ, թե իրենք ինչ իմանալու կարիք ունեն և կարող են դա ինքնուրույն անել: Նրանք պետք է հստակ տեսնեն, թե ինչ ձեռքբերումներ ունեն, և ինչ է անհրաժեշտ հետագա զարգացման համար:

Գնահատմանն առնչվող մոտեցումներն ու մտահոգությունները պետք է միշտ գոյություն ունենան գնահատման ավանդական մշակույթում: Սա նշանակում է, որ իշխանությունները, դպրոցի տնօրենները, ծնողները, ուսուցիչները և իրենք՝ աշակերտները միշտ ցանկանում են իմանալ, թե երեխան, համեմատած մյուսների հետ, ինչ մակարդակի վրա է գտնվում:

Գլուխ 2. Գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Ինչպես գիտենք գնահատումը ուսումնական ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սավորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Գնահատում իրականացնելիս անհրաժեշտ է վերհանել սովորողների կարիքները.

- Յուրացրե՞լ են թեման թե՞ ոչ:
- Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:
- Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:
- Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման և դասավանդման մեթոդիկայում:

Ձևավորող գնահատման գործիքները բազմազան են, և ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային և հետևողականորեն: Կարելի է սկսել ձևավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

Գաղափար1. Արդյունավետ սկիզբ և ավարտ:

Կարևոր է դասի համար ապահովել արդյյունավետ սկիզբ և ավարտ՝ օգտագործելով առաջին և վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ հարցաշար: Ընդ որում, եթե էլեկտրոնայաին ռեսուրսները բավարար չեն, կարելի է խնդրել սովորողներին փոքրիկ թղթիկների վրա գրել յուրացրած և ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները և գցել երկու տարբերակված արկղիկների մեջ: Սա կօգնի հստակեցնել թեմայի յուրացման ամբողջական պատկերը: Իսկ եթե հնարավորությյուն կա օգտագործելու ՏՀՏ գործիքներ, մի շարք հարթակներ, ժամանակի տնտեսումն անխուսափելի կլինի:

Դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց աշխատանքին և ձեռքբերումներին, նշելով՝ 3 բան, որ յուրարել են, 2 բան, որոնց մասին կուզեին ավելին իմանալ և 1 բան, որ չեն հասկացել:

Ապա, սովորողները կարող են շրջել սենյակում և ծանոթանալ միմյանց նշումներին, լրացումներ կատարել իրենց թերթիկներում: Կարելի է նաև սովորողներին առաջարկել ինքնագնահատման հարց՝ «Ի՞նչը ես այլ կերպ կանեի հաջորդ դասին»:

Գաղափար 2. Նվազ ազդեցություն ունեցող թեստեր:

Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս և օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների և գաղափարների յուրացումը: Նվազ ազդեցության թեստերի կիրառումը հարմար է նրանով, որ դրանց արդյունքները չեն ազդում կիսամյակի գնահատականի ձևավորման վրա, այլ յուրաքանչյուր սովորողի համար բացահայտում են, թե թեմայի իմացության ինչ մակարդակ ունեն տվյալ պահին:

Գաղափար 3. «Մեծ եղբայրդ հետևում է քեզ»:

Ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում.

- Ընկերոջդ նամակ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները:
- Նկարիր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման:
- Մտածիր նյութի շուրջ և հետո քննարկիր ընկերոջդ հետ:

Ուսուցիչը շրջում է դասարանում, նշումներ է անում կամ լրացնում է նախապես պատրաստած դիտարկման թերթիկը, որն ավելի հարմար է և հնարավորություն է տալիս ավելի նեղացնելու սովորողներին ուսումնասիրելու դիտանկյունը և կատարել արդյունավետ գրառումներ:

Գաղափար 4. Ձևաչափը՝ հարցազրույց:

Որպեսզի սովորողներին ավելի խորանան ուսումնասիրվող թեմայի մեջ, կարելի է օգտագործել հարցազրույցի, բանավեճի և քննարկման ձևաչափերը:

Կարելի է կազմակերպել նաև 3 բոպեաանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ: Սրա համար կարիք կլինի շատ ժամանակ ծախսել, սակայն հարկ չկա հարցազրույցանցկացնել բոլոր թեմաների և նախագծերի ժամանակ:

Որպես այլընտրանք՝ կարելի է սովորողներին բաժանել զույգերի և տալ հետադարձ կապի տարբերակ.

- Ասել ընկերոջը, թե ինչն իրեն դուր եկավ նրա ելույթում:
- Տալ մեկ հարց և պարզաբանել, թե ինչպես կարելի է բարելավել պատասխանը:

Ինքնամփոփ սովորողների համար կարելի է օգտագործել հատուկ հավելվածներ, որոնք հնարավորություն կտան պատասխանները գրել նախապես:

Գաղափար 5. Արվեստ:

Այն միջոցները, որոնք նախատեսում են դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, նույնպես կարող են ձևավորող գնահատման գործիքներ դառնալ: Սովորողները կարող են նկարել, կոլաժներ և քանդակներ ստեղինչը նրանց հնարավորություն կտա միավորել անցած նյութը մեկ ամբողջության մեջ: նրանք կարող են բեմականացում ներկայացնել որևէ գրական թեմայով կամ անգամ ապրոց ցուցադրել բջիջների բաժանումը, ծաղկի բացվելը, բույսերի ծլելը և այլն: թևավորող գնահատման գործիքները տարբեր են, և յուրաքանչյուր դասավանդող կարող է ընտրել իրեն և իր դասարանին առավել հարմարը:

Կարևորն այն է, որ ձևավորող գնահատումը բարձրացնի յուորաքանչյուր սովորողի՝ իր իսկ ձեռքբերումների, առաջընթացի գիտակցումը, իսկ դասավանդողին հնարավորություն տա ժամանակին փոխելու ուսուցման ընթացքը, հասկանալու սովորողների կարիքները՝ ամփոփիչ գնահատմանը ավելի պատրաստ դարձնելու համար:

Եզրակացություն

Ուսումնասիրելով թեման կարող ենք եզրակացնել, որ աշակերտի գիտելիքների գնահատումը ինքնանպատակ չէ, այլ մի միջոց է կրթական ոլորտը բարեփոխելու համար:

Գնահատման համար նախ սահմանում ենք աշակերտին անհրաժեշտ գիտելիքների սահմանը, ապա փորձում ենք հասնել մեր նպատակին: Երբ անտեսվում են կրթության նպատակներն ու արժեքները, վտանգ կա, որ գնահատումը կվերածվի մի գործընթացի, երբ գնահատվում է այն, ինչ հեշտ է գնահատել, իսկ այն ինչը իրոք գնահատման կարիք ունի, դուրս է մնում տեսադաշտից: Ուսումնառությունը բարդ գործընթաց է, այն ներառում է ոչ միայն աշակերտի ստացած գիտելիքները, այլև թե ինչպես է այն կիրառում գործնականում: Գնահատումը նպատակային գործընթաց է, որի նպատակն է աշակերտի առաջադիմությունը համեմատել կրթության նպատակների ու ակնկալիքների հետ:

Գնահատման հիմքը պետք է լինի հստակ. բոլորի կողմից ընդունելի ու կիրառելի, նպատակային և օգտակար: Այն դրական փոփոխություններ է բերում, քանի որ շեշտը դրվում է օգտակարության վրա:

Գնահատման համակարգը պետք է հիմնվի արդարության, անկողմնակալության, հուսալիության, հիմնավորվածության և թափանցիկության սկզբունքների վրա և ապահովի համադրելիությունը միջազգային ընդունված գնահատման չափորոշիչներին: Պետք է հավելեմ, որ արժանահավատ է համարվում այն գնահատումը, որում գնահատման մեթոդները անմիջականորոն կապված են դասընթացի հետ և չափում են սովորողի հետ դրանց ձեռքբերման մակարդակը:

Տարբերակեցինք գնահատման երկու տեսակ՝ միավորային և ձևավորող: Միավորայինը իրականացվում է ուսուցման փուլի ավարտին, իսկ ձևավորողը ուսուցման ամբողջ ընթացքում: Ուսուցիչն ազատ է որոշելու թե ինչպես կարելի գնահատել սովորողին, դա կլինի խրախուսանք թե միավորային գնահատում:

Ինչպես ասել է Ա. Էյնշտեյնը. «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»: Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները:

Գրականության ցանկ

1. Գիտամեթոդական հանդես, Երևան 2015:
2. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
3. Նախաշավիղ 3, Երևան 2015:
4. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2005:
5. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն. Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան 2005:
6. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ,Տեսություններ, մեթոդներ, գնահատում: Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, «Նոյան տապան», 2005: